




ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ 1989—1990 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 4-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռի հոգևոր ճեմարանի հանդիսության դահլիճում տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 1989—90 ուս. տարվա փակման ամսվերջի հանդիսությունը՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Ս. Վազգեն Առաջինի:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը և այլ հյուրեր:

Միաձայն արտասանված «Տերունական սուրբից» հետո ուսանողությունը երգեց «Ճեմարանի քայերգը», ապա բացման սուրբով հանդես եկավ հոգևոր ճեմարանի դաստիարակ Ս. Նաթան վրդ. Հովհաննիսյանը: Նա իր խոսքում, ի միջի այլոց, նշեց. «Ահավասիկ մեկ էջ ևս գրվեց Ա. Էջմիածնի հոգևոր ճեմարանի պատմության մատնանում: Ավարտվեց ևս մեկ ուսումնական տարի, որի ընթացքում, անշուշտ, եղան լավագույն դժվարություններ և թե՛ ուրախ պահեր, խաղեր ու սրբագործումներ, փնտրտուքներ: Այնպիսիներ: Տարվա ընթացքում մենք ընկին ու կրկին համոզվեցինք, թե որքան ժվարին է եկեղեցու սպասավոր և հովիվ առնալու ճանապարհը»:

Բացման խոսքից հետո, գեղարվես-

տական բաժնում, հոգևոր ճեմարանի ուսանողները երգեցին Ներսես Ծնորհալու և Ներսես Լամբրոնացու շարականները, արտասանեցին Միաք Մեծառենցի. Հովհաննես Թումանյանի, Հովհաննես Ծիրագի բանաստեղծությունները, նվագեցին Արամ Խաչատրյանի, Մակար Եկմալյանի ստեղծագործություններին:

Ի դեմս հոգևոր ճեմարանի ուսանողության, շնորհակալական խոսք ասաց Օճիկ սարկավագ Գիրեմիտյանը, իսկ հոգևոր ճեմարանի տեսուչ Ս. Ամանիս եպս. Արաբաջյանը հանդես եկավ տարեկան հաշվետվությամբ:

Հանդիսության վերջում իր օրհնության խոսքն ասաց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

«Ինձ համար շատ հաճելի պարտականություն է այս ուսումնական տարեշրջանի ավարտին իմ ողջույնը և օրհնությունը բերել Մայր Աթոռիս հոգևոր ճեմարանի տեսչության. դասախոսական կազմին, պաշտոնեության և ուսանողության: Այս պահին ես էլ ձեզ հետ միասին ոգևորվում եմ, ներշնչվում եմ և ավելի լավատես եմ դառնում դեպի մեր եկեղեցու ապագան, որովհետև դուք, մանավանդ ուսանողներդ, մեր հույսն եք և վստահությունը մեր եկեղեցու հետագա հառաջընթացի և ոգեղեն նորանոր իրագործումների: Դուք ներկայաց-

նում եք մեր Եկեղեցու կենդանությունը, հարատևությունը և պայծառությունը: Այս շրջանին, երբ մեր իրերի պայմանները բազում իմաստներով վերափոխվեցին, զարգացումի և վերելքի նոր ճանապարհ բացվեց նաև կրոնական կյանքում, եկեղեցական կյանքում: Այսօր մենք գտնվում ենք մեր ժողովրդի հոգևոր պահանջները բավարարելու պարտականությանը առաջ: Տեսնում ենք, ինչպես և ինչ լաճ չափերով մեր ժողովուրդը իր սիրտը բացել է դեպի կրոնական կյանք, դեպի Եկեղեցի, հատկապես դեպի մեր Մայր Եկեղեցին, մեր ազգային Եկեղեցին: Հոգևոր իմաստով, խորք որ նոր զարթոնք է ապրում մեր ժողովուրդը, որոնում է նոր ճշմարտություններ և հոգու մխիթարություն: Ե՛վ հոգու, և՛ մտքի լուսավորություն, մանավանդ այն, ինչ մեր քրիստոնեական լիբերալ մոլ բխում է Քրիստոսի Ավետարանից: Մենք է, որ մենք կարողանանք բավարարել այդ պահանջները, սա շատ դժվարին գործ է, շատ պատասխանատու գործ է, և մեր ուժերը տակավին բավարար չեն: Եվ ես մտահոգված եմ, հուսախաբ չանել մեր ժողովրդին: Եվ նույնիսկ տեղական իշխանությունները. բազում վայրերից, պարտականություն են ստանձնում իրենք նոր կառուցումներ իրագործել: Բայց կենդանություն պետք է տալ այդ նոր բացվող եկեղեցիներին, վանքերին: Այդ պատճառով էլ արտասահմանից հրավիրում ենք մեր մի շարք հոգևորականներին, նույնիսկ Կիլիկյան Աթոռից: Դժբախտաբար, նրանք էլ բավարար չափով չունեն, արտասահմանում էլ հոգևոր սպասավորի պակաս կա: Ուրեմն, սրանից պետք է եզրակացնենք, թե մեր հոգևոր ճեմարանը շատ անելիք ունի: Այն, ինչ որ մինչև հիմա արեց՝ բավարար չէ: Դուք պետք է կրկնապատկեք մեր ուժերը և ուշադիր լինեք ոչ միայն մեծացնել թիվը մեր ուսանողության, այլ միաժամանակ ուշադիր պետք է լինեք, որ նրանք իսկապես լիարժեք հոգևոր ծառայողներ դառնան և՛ իրենց իմացական կարողություններով, և՛ իրենց գիտելիքներով՝ աստվածաբանական, կրոնագիտական, եկեղեցագիտական, մատենագիտական և այլն: Բայց այդքանն էլ բավական չէ, հատկապես ձեզ՝ ուսանողներին: Ե՛մ ասում: Այդ գիտելիքները շատ կարևոր են, հիմքն են գուցե, բայց բավարար չեն, դրանց հետ պետք է միաձուլված, շողալով լինի կրոնական անկեղծ հավատը և բարոյական նկարագիրը: Այ-

լապես առանց ճշմարիտ, մաքուր հավատքի, առանց բարոյական նկարագրի գիտությունը բավարար չէ: Պողոս առաքյալի առաջնապետությամբ, այն հոգևորականը, որ զուրկ է հավատքից և բարոյական նկարագրից, բայց ունի իմացական և այլ կարողություններ, կարող է վերածվել խառն զանազանի: Ուզում եմ ասել, որ պետք ունենք ճշմարիտ բարձր մակարդակի, որպեսզի մեր ժողովուրդը հոգևոր ծառայողի մեջ տեսնի մի տեսակ առաքյալ, հոգևոր զարթոնքի աղբյուր: Հետո, որպեսզի հավատացյալը իր մեղքերից, իր տկարություններից, իր սխալմունքներից դուրս գա, դաստիարակչական գործ պետք է կատարել նաև: Սա կարող է լինել նոր լուսավորության մի շրջան: Մեր աղոթքը պետք է լինի, որ Աստված նախ մեզ մնա օգնական և լուսավորի մեր ճամփան, մեր ուժերը հավաքենք, և վերակառուցենք նաև մեր եկեղեցական կյանքը, մեր մայր հայրենիքում, Արցախում, Միջուրքում և ներքին Միջուրքում: Բարեբախտաբար նաև մեր նվիրապետական Աթոռները արտասահմանում հիմա առավել լավ պայմանների մեջ են գտնվում, Երուսաղեմի Պատրիարքության եմ ակնարկում մանավանդ, որովհետև պատրիարք ընտրվեց Թորգոմ արքեպիսկոպոսը, որ մեր Եկեղեցու պայծառ ղեկավար մեկն է, ես վստահ եմ, որ նրա օրոք Երուսաղեմի վանքը, միաբանությունը, ժառանգավորացը նոր վերելք պիտի առնի, և Սրբոց Հակոբյանց վանքում էլ արագ թափով նոր հոգևոր սպասավորներ աատրաստեն և կառողանան մասամբ գոն օգտակար լինել մեզ: Եթե նոր լույս բացվի Լիբանանում և հաշտություն ստեղծվի այնտեղ պատերազմող համայնքների միջև, այն ժամանակ Կիլիկյան Աթոռը ևս կարող է մեզ օգնության ձեռք երկարել: Ահա մոտավորապես այդպիսի հեռանկարի առջև ենք գտնվում:

Ես կրկին անգամ իմ օրհնությունն եմ բերում այս մեր նվիրական հաստատության և մաղթում եմ նոր կյանք, նոր վերելք, նոր իրագործումներ, ի փառս և ի պայծառություն մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցու, ամեն:

Հանդիսությունն ավարտվեց Վեհափառ Հարապետի արտասանած «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր» աղոթքով: